18185

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ-338-2023
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «25» «08» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի (այսուհետ պետական մարմին), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի կինոգործիչների միություն» հասարակական կազմակերպությունը, ի դեմս նախագահ Հ. Խաչատրյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) և ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի N 214-Ն որոշումը՝ որոշման «1168. Արվեստների ծրագիր» ծրագրի «32005. Հայ կինոյի 100-ամյակը խորհրդանշող «Աստղային պուրակի» կառուցում» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Հայ կինոյի հիմնադրման 100-ամյա հոբելյանին նվիրված ինքնատիպ քաղաքաշինական մշակութային միջավայրի՝ «Աստղային պուրակի» կառուցման համար «Հայաստանի կինոգործիչների միություն» հասարակական կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է միջոցառումն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 2-ով սահմանված նախահաշվի:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ում:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝**

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքները, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ 6.4-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջոցառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,

2.1.6. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները,

2.1.7. պայմանագրի 2.4.4-րդ ենթակետով սահմանված ժամկետում կազմակերպությունից պահանջել ներկայացնել նույն ենթակետով նախատեսված հաշվետվությունը,

2.1.8. նվիրաբերված գույքն ու սարքավորումները նախարարի հրամանով հանձնել կազմակերպությանը:

**2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝**

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում

միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 2-ով սահմանված նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել փոփոխություն՝ ՀՀ կառավարության 04.05.2017 թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 56-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերին համապատասխան:

**2.3. Պետական մարմինը պարտավոր է՝**

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: հաշվետվություններում թերություններ հայտնաբերելու դեպքում դրանք վերադարձվում են կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

**2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝**

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. սույն կետի 2.4.6-րդ ենթակետով սահմանված դեպքում գնման պայմանագիրը կնքելուց հետո 10-օրյա ժամկետում պետական մարմին ներկայացնել գնման պայմանագրի պատճենը, իսկ միջոցառումների ավարտից հետո սույն պայմանագրի 4.1.-ին կետով սահմանված ժամկետում և սույն պայմանագրի

անբաժանելի մասը կազմող Հավելված 3-ով սահմանված ձևանմուշներով պետական մարմին ներկայացնել ֆինանսական և բովանդակային հաշվետվություն՝ իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառման մասին (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար),

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.7. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան սույն պայմանագրի 4.1-ին կետով հաշվետվությունների համար սահմանված ժամկետից հետո 10 օրվա ընթացքում,

2.4.8. ծրագրի ավարտից հետո ծրագրի իրականացման նպատակով ձեռքբերված գույքն ու սարքավորումները նվիրաբերել պետական մարմնին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը հատկացնում է 30000.0 հազար (երեսուն միլիոն) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20%-ը սույն պայմանագրի 5.2-րդ կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառման կատարման ժամկետը մինչև 2023 թվականի դեկտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, սակայն ոչ ուշ, քան 2023 թվականի դեկտեմբերի 10-ը:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում:

5.2. Պետական մարմնի կողմից կազմակերպության կողմից կատարված միջոցառումների ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 4-ով սահմանված ձևանմուշով:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումների չիրականացման կամ ոչ պատշաճ իրականացման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է նաև միջոցառումը պայմանագրով սահմանված ժամկետներում իրականացնելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու դեպքում:

6.3. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումների իրականացման համար պայմանագրի 4.1-ն կետով սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ժամկետների խախտմամբ իրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.4. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.5. Սույն պայմանագրի 6.2-րդ, 6.3-րդ և 6.4-րդ կետերով սահմանված տուգանքների և տույժերի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտակա-նությունից:

6.6. Պետական մարմինը սույն պայմանագրի 6.2-րդ, 6.3-րդ և 6.4-րդ կետերով սահմանված տուգանքների և տույժերի գումարները հաշվարկում և հետ է գանձում կազմակերպությանը վճարված գումարից:

6.7. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **Պետական մարմին՝** | **Կազմակերպություն՝** |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | «Հայաստանի կինոգործիչների միություն» ՀԿ |
| ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, | ք. Երևան, Վարդանանց 18 |
| Կառավարական տուն N 2 | «Ամերիա բանկ» ՓԲԸ |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Հ/Հ 157000100220100 |
| Հ/Հ 900011042646 | ՀՎՀՀ 02511007 |
| ՀՎՀՀ 02698732 | Հեռ.՝ 091 27 07 76, 094 42 59 61 |
| Գլխավոր քարտուղար՝ | Նախագահ՝ |
| Հ. Հակոբյան | Հ. Խաչատրյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1

«25» «08» 2023 թ.

N ՄՇԴ -338 -2023 պայմանագրի

# ԾՐԱԳԻՐ

## Հայ կինոյի 100-ամյակը խորհրդանշող «Աստղային պուրակի» կառուցման

| | | |
|---|---|---|
| 1 | Կազմակերպության անվանում | «Հայաստանի կինոգործիչների միություն» ՀԿ |
| 2 | Կազմակերպության գտնվելու վայր | Ք. Երևան, Վարդանանց 18 |
| 3 | Ծրագրի անվանում | «Հայ կինոյի 100-ամյակը խորհրդանշող Աստղային պուրակի կառուցում» |
| 3.1 | Բովանդակություն | Երևանի Կինոյի տանը հարակից 1290 քմ մակերեսով տարածքում, որը Կինոյի տան կառուցումից՝ 1974 թվականից ի վեր, եղել է որպես Կինոյի տան գլխավոր մուտքին կից կանաչ տարածություններով հարթակ, կկառուցվի «Հայ կինոյի 100-ամյակը խորհրդանշող Աստղային պուրակ»: Կկատարվեն շինարարական աշխատանքներ՝ մասնավորապես, «Աստղային պուրակի» նախագծով նախատեսված հաշմանդամություն ունեցող մարդկանց համար սահմանված չափորոշիչներով թեքահարթակների, 1290 քմ տարածքի սալարկման, լուսային և ձայնային համակարգերի տեղադրման համար համապատասխան ենթակառուցվածքների (էլեկտրամոնտաժային, մալուխային ուղիներ, համապատասխան պատեր և հարթակներ և այլն) կառուցում: Կկառուցվեն նաև լուսային և ձայնային համակարգերի տեղադրման համար հատուկ կոնստրուկցիաներով հարթակներ, որոնց վրա կտեղադրվեն մուտքի արտաքին-բացօդյա լեդ էկրաններ՝ մշակութային տեղեկատվության տարածման համար:<br><br>«Աստղային պուրակը» ոչ միայն կհավերժացնի հայ կինոյի մեծանուն դերասանների (Հրաչյա Ներսիսյան, Ավետ Ավետիսյան, Հասմիկ, Վարդուհի Վարդերեսյան, Տատյանա Մախմուրովա, Գուրգեն Ջանիբեկյան, Դավիթ |

| | | |
|---|---|---|
| | | Մալյան, Խորեն Աբրահամյան, Միեր Մկրտչյան և այլոց գործը, կնշանավորի Հայ կինոյի 100-ամյա հոբելյանը, այլև իր ճարտարապետական և քաղաքաշինական մոտեցումներով թույլ կտա, որպեսզի այդ տարածքը միաժամանակ օգտագործվի որպես հանգստի գոտի և միջոցառումների անցկացման վայր՝ հանդիսանալու մշակույթ և հիշողություն կրող Երևանի կարևորագույն կենտրոններից մեկը՝ միաժամանակ կրելով մշակութային և կրթական նշանակություն: |
| 3.2 | Նպատակ | Աստղային պուրակում նոր մոտեցումներով հավերժացնել Հայ կինոյի 100-ամյա պատմությունը խորհրդանշող արտիստներին, որոնց անունները մեր 100-ամյա կինոյի պատմության անբաժանելի մասն են:<br>Ստեղծել մշակույթ և հիշողություն կրող միջավայր: |
| 3.3 | Անցկացման ժամկետ | Օգոստոս-դեկտեմբեր, 2023թ. |
| 3.4 | Անցկացման վայր | Ք. Երևան, Վարդանանց 18 |
| 3.5 | Ակնկալվող արդյունքներ | Հավերժացնելով հայ կինոյի մեծանուն արտիստների անունները և ստեղծելով հանգստի ու ժամանցի կրթական, մշակութային, զբոսաշրջային միջավայր հատկապես երիտասարդությանը տալ տեղեկատվական հոսքեր հայ կինոյի մասին, ծանոթացնել հայ կինոյի նշանավոր արտիստներին, նպաստել, որ նրանք իրենց ժամանցն ու հանգիստն անցկացնեն մշակութային միջավայրում, ցանկություն ունենան դիտելու հայկական ֆիլմեր, ծանոթանալու հայ կինոյի պատմությանն ու ֆիլմերին, դերասանների, ստեղծագործական կազմերի անցած ուղուն և այլն: Միաժամանակ նպաստել, որ շրջապատը, զբոսաշրջային հոսքերը առավել շահագրգիռ լինեն այցելելու «Ազգային Սինեմատեք» կինոթանգարան, որն ունի նույն նպատակը՝ ծանոթացնել հայկական կինոյին և նրա պատմությանը: Ակնկալվում է յուրաքանչյուր տարի առնվազն 20.000 հանդիսական մուտք աստղային պուրակով դեպի Կինոյի տուն, կինոփառատոնային միջոցառումների ընթացքում յուրաքանչյուր տարի առնվազն 2000 հանդիսական մուտք, ինչպես նաև յուրաքանչյուր աստղի բացման |

| | | |
|---|---|---|
| | | հանդիսավոր արարողությանը առնվազն 100 հանդիսականի մասնակցություն աստղային պուրակում: |
| 3.6 | Ոչ ֆինանսական ցուցանիշներ | Աստղային պուրակ՝ 1<br>Բացման հյուրերի քանակ՝ մոտ 500 |

**Պետական մարմին՝**
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011042646
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ

**Կազմակերպություն՝**
«Հայաստանի կինոգործիչների միություն» ՀԿ
ք. Երևան, Վարդանանց 18
«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 157000100220100
ՀՎՀՀ 02511007
Հեռ.՝ 091 27 07 76
094 42 59 61
Նախագահ՝

Հ. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«25» «02» 2023 թ.
N ՄՇԴ-338-2023 պայմանագրի

## ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայ կինոյի 100-ամյակը խորհրդանշող «Աստղային պուրակի» կառուցման հետ կապված ծախսերի

| Հ/Հ | Ծախսատեսակի անվանումը | Չ/Մ | Քանակ | Միավորի արժեքը (հազ. դրամ) | Գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | **Շինարարական աշխատանքներ, այդ թվում՝** | | | | **25000.0** |
| 1.1 | Առկա քարե 4 սմ հաստությամբ սալիկների ապամոնտաժում | մ2 | 305 | 4654 | 1419.5 |
| 1.2 | Խճի նախապատրաստական շերտի պատրաստում 40սմ հաստությամբ,տոփանումով | մ3 | 122 | 13060 | 1593.3 |
| 1.3 | B-7.5 դասի բետոնից նախապատրաստական շերտ 10սմ հաստությամբ | մ3 | 30.5 | 30960 | 944.3 |
| 1.4 | Ջրամեկուսիչ շերտի պատրաստում 2 շերտ իզոգամից | մ2 | 305 | 3150 | 960.8 |
| 1.5 | Հատակների երեսպատում 40մմ հաստությամբ բազալտե սալերով | մ2 | 151.6 | 12600 | 1910.2 |
| 1.6 | Բազալտի բնույթով կարմրավուն քարի հատակների պատրաստում | մ2 | 65 | 18045 | 1172.9 |
| 1.7 | Հենապատերի պատրաստում լուսային և ձայնային վահանակների տեղադրման համար՝ B-20 դասի բետոնից | մ3 | 28.3 | 66730 | 1888.5 |
| 1.8 | Պատերի կարկասի պատրաստում B-20 դասի բետոնից | մ3 | 4.13 | 73000 | 301.5 |
| 1.9 | Հաշմանդամություն ունեցող մարդկանց համար թեքահարթակների կառուցում, երեսպատում 40մմ հաստությամբ բազալտե սալերով(6,74+7,3)մ2 | մ2 | 14.04 | 12600 | 176.9 |
| 1.10 | էլեկտրամոնտաժային, մալուխային ուղիների կառուցում | գծ/մ | 10 | 18100 | 181.0 |
| 1.11 | Լուսային և ձայնային համակարգերի տեղադրման համար հատուկ կոնստրուկցիայով հարթակների կառուցում | հարթակ | 2 | 300000 | 600.0 |
| 1.12 | Մուտքի արտաքին-բացօդյա կինոցուցադրման համակարգի (լեդ էկրանների) ձեռքբերում, հավաքում, տեղադրում, մոնտաժում | հատ | 2 | 6925621 | 13851.2 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **25,000.0** |
| | **ԱԱՀ*** | | | | **5,000.0** |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ** | | | | **30,000.0** |
| | * ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե: | | | | |

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝**
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011042646
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան
Կ. Տ.

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝**
«Հայաստանի կինոգործիչների միություն» ՀԿ
ք. Երևան, Վարդանանց 18
«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 157000100220100
ՀՎՀՀ 02511007
Հեռ.՝ 091 27 07 76, 094 42 59 61
Նախագահ
_____ Հ. Թադևոսյան
Կ.Տ.

Հավելված N 3
«25» «08» 2023 թ.
**N ՄՇԴ -338 -2023** պայմանագրի

**ՁԵՎԱՆՄՈՒՇ 1**

**Ֆինանսական հաշվետվության փաստաթղթերի ամփոփաթերթ**

Կատարող կազմակերպությունը _____

Միջոցառման անվանումը _____

| NN | Նախահաշվի հոդվածը | Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով) | Փաստացի գումարը (դրամով) | Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով) | Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | |
| ... | | | | | |
| | Ընդամենը | | | | |

«____» _____ 20___ թ.

Կատարող կազմակերպության ղեկավար՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

## ՁԵՎԱՆՄՈՒՇ 2
## Բովանդակային հաշվետվության

«_____»«_____» 20 ___ թ.
Պայմանագրի անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____»«_____» 20 ___ թ.
Պայմանագրի համարը _____
Կատարող կազմակերպությունը _____

Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները

| N | Իրականացված միջոցառման | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | նկարագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | |
| | | | ըստ պայմանագրի | փաստացի | ըստ պայմանագրի | փաստացի |
| 1 | | | | | | |
| ... | | | | | | |

Նշումներ անհամապատասխանությունների մասին՝

_____

_____

_____

Հավելված N 4
«25» «09» 2023 թ.
**N ՄՇԴ -338 -2023** պայմանագրի

**ՁԵՎԱՆՄՈՒՇ**

**Կազմակերպության կողմից կատարված և պետական մարմնի կողմից ընդունված միջոցառումների հանձնման-ընդունման արձանագրություն**

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

**հասցեն՝** Երևան, Կառավարական տուն2
ՀՎՀՀ՝ 02698732

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝**

_____
*(կազմակերպության անվանումը)*

**հասցեն՝**
ՀՎՀՀ՝

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

**«____» _____ 20___ թ.** **ք. Երևան**

**Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը** **առ** «___»_____20__թ.

**Պետական մարմինը՝ ի դեմս** ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____, **և Կազմակերպությունը, ի դեմս**

______________________________ ______________
(կազմակերպության անվանումը) (զբաղեցրած պաշտոնը)

ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ բովանդակային վարչության «___» ___________ 20__թ. N__________ եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության «___» ___________ 20__թ. N__________ եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Կազմարպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է

______________________________
(միջոցառման համառոտ նկարագիրը)

միջոցառումը, իսկ պետական մարմինը վճարել է դրա դիմաց պայմանագրով սահմանված կարգով և չափով:

| | |
|---|---|
| **ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝** | **ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝** |
| **ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն** | ______________ (կազմակերպության անվանումը) |
| **գլխավոր քարտուղար** | ______________ (զբաղեցրած պաշտոնը) |
| ______________ /__________/ (անուն-ազգանուն) (ստորագրություն) | ______________ /__________/ (անուն-ազգանուն) (ստորագրություն) |
| **գլխավոր քարտուղարի տեղակալ** | |
| ______________ /__________/ (անուն-ազգանուն) (ստորագրություն) | |